ՇԴ/0143/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20 մայիսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2025 թվականի մայիսի 13-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի մարտի 17-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արշամ Զոհրաբի Մկրտումյանի

վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ 28-0077-23 (ՇԴ/0143/01/25) քրեական վարույթը:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մարտի 20-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0143/01/25 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

3. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 7-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և այն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

4. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

5. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի մայիսի 15-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. 2025 թվականի մարտի 11-ի որոշմամբ Ա.Մկրտումյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 3-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«(…) նա ունենալով տրանսպորտային միջոցներ վարելու «B, C» կարգի վարորդական իրավունքի գործող վկայական, գտնվելով սթափ վիճակում, 2023 թվականի նոյեմբերի 09-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, Արմավիր-Գյումրի ավտոճանապարհին վարել է Արման Հրանտի Առաքելյանի անվամբ հաշվառված, սակայն փաստացի իր կողմից շահագործվող «ZIL 138A» մակնիշի 35 XF 917 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը և ուղևոր Արկադի Բաղդասարի Գոմցյանի հետ երթևեկել է Արմավիր-Գյումրի ավտոճանապարհով դեպի Գյումրի քաղաքի ուղղությամբ ու հասնելով նույն ավտոճանապարհի 80-րդ կիլոմետր հատված՝ Շիրակի մարզի Անի համայնքի*

Իսահակյան բնակավայրի վարչական տարածք, խախտել է ճանապարհային երթևեկության կանոնների 2-րդ կետի և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ այն է դեպքի վայրի ճանապարհի տվյալ հատվածում «Բոբ Կատ» մակնիշի «4868 LL» հաշվառման համարանիշի տեխնիկան շրջանցելու նպատակով, իր վարած ավտոմեքենան դուրս բերելով հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմաս ու իրականացնելով ձախակողմյան երթևեկություն, տեխնիկական տեսակետից ստեղծել է վթարային իրադրություն երթևեկության ու մասնավորապես, հանդիպակաց ուղղության երթևեկելի ուղեմասով մուտեցող տրանսպորտային միջոցների՝ տվյալ կոնկրետ դեպքում «Vaz 21063» մակնիշի 45 SS 575 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ Սամվել Մելիքի Մինասյանի երթևեկության համար, ինքն իրեն զրկելով այն կանխելու տեխնիկական հնարավորությունից, որի արդյունքում բախվել է «Vaz 21063» մակնիշի 45 SS 575 հաշվառման համարանիշի ավտոմեքենային և անզգուշությամբ առաջացրել «Vaz 21063» մակնիշի 45 SS 575 հաշվառման համարանիշի ավտոմեքենայի վարորդ Սամվել Մելիքի Մինասյանի ու ուղևոր Վանիկ Զոհրաբի Շահինյանի մահը: (...)»[1]:

7. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով պաշտպան Ս.Մարտիրոսյանի՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդությունը, 2025 թվականի մայիսի 7-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Քրեական գործի նյութերի, առաջին հերթին՝ մեղադրական եզրակացության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մեղադրյալ Արշամ Զոհրաբի Մկրտումյանը, տուժողներ Արմեն Սարգսի Մինասյանը, Լալա Կարլենի Շահինյանը և մեղադրանքի կողմից ներկայացված 3 (երեք) վկաներից 2-ը (երկուսը) բնակվում են ՀՀ Արմավիրի մարզում, մեղադրյալի պաշտպանների գործունեության վայրը նույնպես Արմավիրի մարզն է: Բացի այդ, մեղադրանքի կողմից ներկայացված փորձագետը՝ Արմեն Շիրվանի Բաղդասարյանը, բնակվում է Երևանում, որը սահմանակից է Արմավիրի մարզին:*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 2, թերթեր 95-96:

Այսինքն, միայն հանրային մեղադրողի գործունեության և վկաներից մեկի բնակության վայրն է Շիրակի մարզը:

(…)

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով, որ թիվ ՇԴ/0143/01/25 վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում՝ Արմավիրի մարզում, դատակոչված փորձագետի բնակության վայրը Երևանն է, իսկ մեղադրյալը համաձայն է գործի տարածքային ընդդատությունը փոխելուն՝ Դատարանը գտնում է, որ նշված վարույթը պետք է ըստ ընդդատության փոխանցել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[2]:

8. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը ուսումնասիրելով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշումը, գտնում է, որ առկա է ընդդատության վեճ այն պատճառաբանությամբ, որ դեպքը տեղի է ունեցել Շիրակի մարզում, ինչն էլ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին և նման պարագայում Դատարանը գտնում, որ դատակոչի ցուցակում առկա դատավարության մասնակիցների բնակության վայրի՝ զուտ Արմավիրի մարզում գտնվելը, չի կարող հիմք հանդիսանալ քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու համար:*

ՀՀ քրեական դատավարությունը սահմանում է ընդդատության երկու տեսակ՝ տարածքային և առարկայական: Տարածքային ընդդատության կարգավորման կարևորագույն չափանիշը դա ենթադրյալ հանցանքի կատարման վայրի չափանիշն է, որն էլ հստակ սահմանված է քրեական դատավարության օրենսգրքում և տարածքային ընդդատության խախտումը կհանգեցնի քրեական գործի քննության շեղմանը:

---

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 31-33:

Այսինքն օրենսդիրը հստակ սահմանել է տարածքային ընդդատության առաջնային չափանիշը, այն է՝ ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, իսկ այնուհետև դրա բացառումից հետո միայն սահմանել է այլընտրանքային տարբերակներ:

Այդպես.

- Սույն քրեական վարույթով հանցագործությունը կատարվել է Շիրակի մարզի Անի համայնքի Իսահակյան բնակավայրի վարչական տարածքում:

- Քրեական վարույթով ամբողջ նախաքննությունն իրականացվել է Շիրակի մարզի տարածքում:

- Դեպքի վայրը հանդիսանում է Շիրակի մարզը:

- Թիվ 28-0077-23 քրեական գործը Շիրակի մարզի դատախազությունից 2025 թվականի մարտի 17-ի գրությամբ ուղարկվել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

- Քրեական գործին շնորհվել է թիվ ՇԴ/0143/01/25 համարը և 2025 թվականի մարտի 18-ին այն հանձնվել է դատավորին:

- 2025 թվականի մարտի 20-ին Դատարանը որոշում է կայացրել թիվ ՇԴ/0143/01/25 քրեական գործի վարույթն ստանձնելու և նախնական դատաքննություններ նշանակելու մասին:

- 2025թ մայիսի 07-ի որոշմամբ սույն քրեական վարույթն ըստ ընդդատությամբ փոխանցվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան այն պատճառաբանությամբ, որ մեղադրյալ Արշամ Զոհրաբի Մկրտումյանը, տուժողներ Արմեն Սարգսի Մինասյանը, Լալա Կարլենի Շահինյանը և մեղադրանքի կողմից ներկայացված 3 (երեք) վկաներից 2-ը (երկուսը) բնակվում են ՀՀ Արմավիրի մարզում, մեղադրյալի պաշտպանների գործունեության վայրը նույնպես Արմավիրի մարզն է, բացի այդ, մեղադրանքի կողմից ներկայացված փորձագետը՝ Արմեն Շիրվանի Բաղդասարյանը, բնակվում է Երևանում, որը սահմանակից է Արմավիրի մարզին, ինչին սակայն առարկել է հանրային մեղադրողը:

Այսպիսով, Դատարանը, վերը նշված պատճառաբանությամբ ու հաշվի առնելով Վճռաբեկ դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումները, ելնելով

ընդդատության պահպանման վերը նշված պահանջներից ու պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն այն պետք է ըստ ընդդատության ուղարկվի Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: (…)»[3]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 37-42:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

12. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]:

13. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

14. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

15. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Արմավիրի մարզում, դատակոչված փորձագետի բնակության վայրը Երևանն է, ինչպես նաև այն, որ մեղադրյալն իր համաձայնությունն է հայտնել վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ[7], որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին[8]:

- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, արձանագրելով, որ թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն ընդդատյա է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, գտել է, որ դատավարության մասնակիցների՝ Արմավիրի մարզում բնակվելու հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար[9]:

16. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալի համաձայնությամբ փոխել և վարույթն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Ա.Մկրտումյանի,

---

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, դատական նիստի արձանագրություն, թերթեր 18-20:
[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

տուժողներ Ա.Մինասյանի, Լ.Շահինյանի, վկաներ՝ Ա.Գոմցյանի, Հ.Մինասյանի բնակության[10] և պաշտպաններ Ս.Մարտիրոսյանի ու Մ.Տիգրանյանի գործունեության[11] վայրն է Արմավիրի մարզը, իսկ վկա Ա.Կիրակոսյանի բնակության վայրն է Շիրակի մարզը[12]: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են ութ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ յոթ անձ, բնակվում է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Ի դեպ, նշված հանգամանքն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը կասկածի տակ չի դրել:

17. Վերոգրյալի հետ մեկտեղ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը հարկ է համարում նշել, որ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման հիմքում դրված հիմնավորումը հակասում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգավորմանը, նկատի ունենալով, որ այն ուղղակիորեն հնարավորություն է տալիս վերընշված պայմանների առկայության դեպքում փոխել տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ ստացված վարույթի ընդդատությունը:

18. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթն Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

19. Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

---

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 143:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 7, 8:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 143:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՇԴ/0143/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ